ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 71

«18» 12 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԵՔԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 62 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշումով հաստատված կարգի 15-րդ կետի 1-ին ենթակետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասին 7-րդ և 11-րդ կետերով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամանում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու համար ստեղծել փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ հետևյալ կազմով՝

Փանոսյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),

Մարուխյան Արմեն -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ,
Հովսեփյան Սոնա -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ,
Սարգսյան Հարություն -	Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ,
Աբաջյան Արուսյակ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ,
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար):

2. Հանձնաժողովում, ըստ անհրաժեշտության, մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով, կարող է ընդգրկվել արխիվային գործի մասնագետ:

3. Երևան քաղաքի, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների և կայազորների զինվորական դատախազությունների փորձագիտական հանձնաժողովներն իրենց կազմած մշտական և երկարաժամկետ պահպանման գործերի ցուցակները, դատախազությունում պահպանվող ժամկետանց փաստաթղթերը ոչնչացման համար առանձնացնելու մասին ակտերը համաձայնեցնում են համապատասխանաբար Երևան քաղաքի, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայազորների զինվորական դատախազների հետ:

4. Երևան քաղաքի, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների և կայազորների զինվորական դատախազությունների փորձագիտական հանձնաժողովների կազմում որպես քարտուղար ընդգրկել Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ Ն.Խալաթյանին:

5. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Երևան քաղաքի, մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների փորձագիտական հանձնաժողովների կազմած մշտական և երկարաժամկետ պահպանման գործերի ցուցակները, դատախազությունում պահպանվող ժամկետանց փաստաթղթերը ոչնչացման համար առանձնացնելու մասին ակտերը հաստատում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

6. Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազությունների փորձագիտական հանձնաժողովների կազմած մշտական և երկարաժամկետ պահպանման գործերի ցուցակները, դատախազությունում պահպանվող ժամկետանց փաստաթղթերը ոչնչացման համար առանձնացնելու մասին ակտերը հաստատում է Հայաստանի Հանրապետության

զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 28-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու համար փորձագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 62 հրամանը:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

9. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

10. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ